



FOREST SUMMIT

Global Action and Armenia

Co-Presented by

AUA

ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian

Conventures, Inc.

tskenderian@conventures.com

617-204-4239

Անտառների վերաբերյալ առաջին համաժողովը հոկտեմբերին Հայաստանում կհամախմբի ոլորտի մասնագետների 5 մայրցամաքներից

«Էյ Թի Փի»-ն և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը սիրով հայտարարում են, որ «Գազաթաժողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» հոկտեմբերին կայանալիք համաժողովի բանախոսների թիվը կավելանա ևս մի քանիսով՝ ի նպաստ Հայաստանի հանձնառությանը՝ կրկնապատկել երկրի անտառածածկ տարածքների մակերեսը մինչև 2050 թվականը:

Հոկտեմբերի 20-23-ը կայանալիք համաժողովը կստեղծի անտառվերականգնման բնագավառում առաջատար մասնագետների միջև գիտելիքների փոխանակման, երկխոսության և կապերի հաստատման հնարավորություններ: Գազաթաժողովին կարևոր ուղերձով կներկայանա անտառազփոխության ոլորտում հետազոտական և կրթական գործունեություն ծավալող աշխարհի առաջատար հաստատություններից մեկի՝ Օրեգոնի պետական համալսարանի Անտառազփոխության քոլեջի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Էնթոնի Ս. Դեյվիսը:

Գլխավոր բանախոս Էնթոնի Ս. Դեյվիսից բացի միջոցառմանը ելույթ կունենան նաև «Woods Hole»-ի հետազոտական կենտրոնի բնապահպանության գծով տնտեսագետ Գլեն Բուշը, Իսրայելի ամենամեծ բնապահպանական կազմակերպությունը՝ KKL-JNF ազգային հիմնադրամի գլխավոր անտառագետ և անտառների ստորաբաժանման տնօրեն դոկտոր Օմրի Բոննեդը, Լիբանանի անտառվերականգնման նախաձեռնությունը՝ կազմակերպության գործադիր տնօրեն դոկտոր Մայա Նեհմեն, 2004թ.-ին Քենիայում անտառապատման և հասարակական ակտիվության համար խաղաղության Նոբելյան մրցանակ ստացած միջազգային «Կանաչ գոտի» շարժման ծրագրերի պատասխանատու Դեյվիդ Մաթենջեն և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Կանաչ կլիմայի հիմնադրամի Լատինական Ամերիկայի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով տարածաշրջանային խորհրդական Կարմեն Արգուելլոն:

«Բանախոսները արժեքավոր տեղեկություններ կտրամադրեն 5 մայրցամաքների անտառային տնտեսությունների մասին, ինչպես նաև կկիսվեն անտառների շարունակական աճը խթանելու համար ոլորտում առկա հնարավոր համագործակցության, նորամուծությունների և լավագույն փորձի օրինակներով: Հայաստանը նման համաժողովներ անցկացնելու ամենահարմար վայրն է: 1994թ.-ից մինչ այժմ մեր հասարակական կազմակերպությունը տնկել է շուրջ 6 միլիոն ծառ: Համաձայն գիտահետազոտական աշխատանքների արդյունքների՝ ծառերն ու անտառները նպաստում են շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև գյուղական վայրերում տնտեսության զարգացմանը», - նշեց «Էյ Թի Փի»-ի փոխտնօրեն Տեյսոն Սոհիգյանը:

Ի լրումն փորձառու բանախոսների ելույթների՝ համաժողովի ընթացքում կկազմակերպվեն այցելություններ ծառերի տնկման տարբեր վայրեր և Դիլիջան ազգային պարկ: Միջոցառման առանցքային նպատակն է խթանել անտառների պահպանության և վերականգնման ուղղված



FOREST SUMMIT

Global Action and Armenia

Co-Presented by

AUA

ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian

Conventures, Inc.

tskenderian@conventures.com

617-204-4239

խնդիրների վերաբերյալ քննարկումների և համագործակցային երկխոսությունների ստեղծմանը:

Համաժողովի, Յակոբեան բնապահպանական կենտրոնի և «Էյ Թի Փի»-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://forestsummit.am/hy/>:

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասին

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը (ՅԿԲ) Հայաստանի ամերիկյան համալսարանի հետազոտական կենտրոն է: ՀԱՀ ՅԿԲ-ն խրախուսում է բնական միջավայրի պահպանությունն ու վերականգնումը՝ հետազոտության, կրթության և հասարակության հետ կապերի միջոցով: ՀԱՀ ՅԿԲ-ի աշխատանքային ուղղվածություններն են բնական պաշարների կայուն կառավարումը, կենսաբազմազանությունը, ստեղծված շրջակա միջավայրի կանաչապատումը, մաքուր էներգիան և էներգաարդյունավետությունը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներն ու շրջակա միջավայրը:

«Էյ Թի Փի»-ի մասին

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ տեղակայված Ուոբուրն և Երևան քաղաքներում: Մենք իրականացնում ենք կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր՝ Հայաստանի քաղաքներում և գյուղերում:

1994թ.-ից «Էյ Թի Փի»-ն հսկայական աշխատանք է իրականացրել անապատացման դեմ պայքարում գործելով կենսաբազմազան, սակայն վտանգված Կովկասյան տարածաշրջանում: Ծրագրի շրջանակներում տնկվել և վերականգնվել են ավելի քան 5700000 ծառեր և ստեղծվել բազմաթիվ աշխատատեղեր: «Էյ Թի Փի»-ն նպաստում է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ներգրավելով միջոցներ անտառների վերականգնումը ֆինանսավորելու համար: Մեր կողմից աճեցված և տնկված ծառերը կենսական նշանակություն ունեն. նրանք մարդկանց ապահովում են մսնդով, փայտով, բնապահպանական բարիքներով և տնտեսության աճի համար անհրաժեշտ հնարավորություններով:

«Էյ Թի Փի»-ն ունի ավելի քան 80 աշխատակից Հայաստանում: Երևանյան մասնաճյուղն ապահովված է չորս ժամանակակից տնկարաններով և բնապահպանական կրթության համար նախատեսված երկու կենտրոններով:

Երևանյան մասնաճյուղը համագործակցում է համայնքային բնակչության հետ՝ միկրո-ձեռնարկությունների (տնամերձ տնկարաններ) ստեղծման միջոցով, հիմնում է հանրային օգտագործման կանաչ գոտիներ, անտառապատման միջոցով վերականգնում է եռոզացված անտառային հողեր: Նոր անտառներ տնկելու նպատակով հիմնադրամը ժամանակավոր աշխատատեղեր է ստեղծում հարյուրավոր մարդկանց համար: Ավելին իմանալու համար այցելեք՝ www.armeniatree.org